

ԲՆԱԿԱՆՔ

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տնդակահ կլիմայից տնկոց վրայ ըրած ազդեցութիւնը :

Ինչպէս որ յայտնի է ծառերու աճումն և շուտով առաջ գալը մեծաւ մասամբ կլիմայից անոնց վրայ ըրած ազդեցութեան կը կախուի, որ երկրագործութեան մէջ հարկաւոր դիտելու բան մըն է : Ընդհանուր հարկ է ընդարձակ խօսիմք թէ ինչ կերպով կլիմային ըրած ազդեցութեամբ ծառերը շուտով առաջ կու գան ու կ'աճին, և թէ ինչ հարկաւոր դիտելու բաներ կան տնկաբանութեան մէջ աս բանիս նկատմամբ : Աստի նախ և առաջ պէտք է խօսիմք թէ ինչ կ'իմացուի երկրագործութեան մէջ կլիմայ ըսելով :

Տեղւոյ մը կլիմային վրայ ստոյգ ծանօթութի մը ստանալու համար, պէտք է՝ ոչ միայն նոյն տեղւոյն միջին բարեխառնութիւնը, այլ նաև սովորականէն աւելի բարձր կամ ցած բարեխառնութեան աստիճանները գիտնալ. վասն զի ձմեռուան մէջ սովորականէն աւելի քանի մը աստիճան բարձր ցրտութիւնը բաւական կ'ըլլայ ծառ մը բոլորովին չորցնելու, ինչպէս դարձեալ ընդհանուր կառակն՝ ամառուան մէջ սովորականէն աւելի տաքութիւն մը կրնայ վնասակար կերպով տնկոց վրայ ներգործել : Իաց ասկէ՝ այս ալ յայտնի է թէ որ և իցէ կլիմայի տակ հարկաւ ըստ ժամանակին և ըստ եղանակին պիտի ըլլան սառոյց, մառախուղ, յանկարծական խոնաւութիւն ու քամի, որոնք բընութեան օրինաց անհրաժեշտ արգասիքն են : Աստի այս ամէն երեւոյթները մտածելով՝ կրնանք տեղւոյ մը կլիմային վրայ աս սահմանս տալ. Բոլանդաշու-Լիան ջերմային և մեղեորային երևուելից, որ կը պահանջուի հոն, և որոնց ապրելու-Լիանը օգտակար կամ վնասակար է րնկոց :

Իսկ տեղւոյ մը տարածութիւնը կամ հեռաւորութիւնը միջօրէականով հասարակածին վրայ չափելու գործողութիւնը, աշխարհագրական կլիմայ կ'ըսուի. ուստի և աշխարհագիրք՝ երկրիս բոլորտիքը իրեք գլխաւոր մաս բաժնելով, անուանեցին Լայրեցած, Իարեխառն և Սառուցեալ գօտիներ : Ընդհանուր բաժանմունքը մեզի համար կանոն չկրնար ըլլալ նաև մասնաւոր տեղւոյ մը կլիման ալ գիտնալու. այլ միայն կ'իմանանք այս իրեք գօտիներուն ձեռքով կլիմայի ընդհանուր բաժանումները, և բարեխառնութեան զանազանութիւնները, որ արևուն հորիզոնին վրայ այլ և այլ աստիճանի բարձրութեամբ երկնից կամարը կտրելէն կը կախուի :

Իարեխառնութեան այս մեծամեծ զանազանութեանց գիտութիւնը գրեթէ աւելորդ բան մը կ'ըլլար՝ եթէ անոր վրայ չաւելցնէինք նաև իւրաքանչիւր տեղերու առանձին կլիմայից զանազանութիւնն ալ, որոնք մետէորական երևութից ձեռքով իւրաքանչիւր երկրի վրայ զգալի ազդեցութիւն կ'ընեն. ուստի եթէ ուզենանք ինչուան աս մանր զննութեանց իջնալ՝ ամենապզտիկ դիտողութիւն մ' ալ արժէք ունի :

Լայրկար քննութեամբ ու շատ փորձերով խել մը տեսակ կարևոր գիտողութիւններ եղած են, որոնցմով շատ լուսաւորուած է տեղական կլիմայից խնդիրը : Տեղական կլիմայք ենթակայ են չորս գլխաւոր ազդեցութեանց, որ են. Ա. Իարձրութիւն, ծովուն երեսէն առած. Բ. Ընդհանուր երկրիս մակերևոյթը. Գ. Ընդ և այլ տեղերու դրից զանազանութիւնը. և Դ. Ընդ պաշտպանութիւնները, որոնք արուեստով կը շինուին տունկերը վնասակար քամիներէ և օդոյ յանկարծական փոփոխութիւններէ պաշտպանելու համար :

Ա. Իարձրութիւն. յայտնի է թէ որչափ որ մթնոլորտին մէջ բարձրանանք, այնչափ ալ աւելի բարեխառնութիւնը

կը նուազի, այսինքն օդը կը ցրտանայ, թէպէտ այս երևուածիս օրէնքը դեռ մեզի անծանօթ է. բայց այս ստոյգ է՝ զոր [Կէյ-] իւստք իր օգապարիկի ճիշդ փորձերովը ապացուցած է, թէ մթնոլորտին վերին կարգերուն մէջ սաստիկ ցրտութիւն մը կը տիրէ, և այս բանիս գլխաւոր պատճառը օդոյ առջերիկ¹ ըլլալը, այսինքն ջերմութիւնն իր մէջէն թափանցել տալու յատկութիւնը կը կարծուի, որով արեւէն եկած ջերմութիւնը ուղղակի օդոյն մէջէն թափանցելով կու գայ երկրիս վրայ կը հաւաքուի առանց օդոյ վերին մասանցն հետ միանալու. նոյնպէս նաև երկրիս անդրադարձեալ ջերմութիւնն ալ վեր կը բարձրանայ ու չորս դին կը ցրուի: Արդ երկիրս արեւէն եկած ջերմութեան հասանքներէն տաքնալով՝ կը սկսի իրեն մերձաւոր առարկայից ալ հաղորդել զայն, որով և ջերմութիւնը մթնոլորտին ստորին կարգերուն մէջ կ'աճի: Այս հաւանական պատճառիս վրայ կրնանք աւելցնել նաև ջերմութեան ցոլացումը կամ ճառագայթարձակութիւնը, որ այնչափ աւելի սաստիկ կ'ըլլայ՝ որչափ որ տեղ մը աւելի բարձր ըլլայ, ինչպէս լեռները և ուրիշ բարձր դիրքեր, որոնց վրայ արդէն վերջը պիտի խօսինք: — Վանք հիմա երկրիս մակերևութին վրայ խօսելու:

Բ. Արեւի մալերիոյն ալ շատ ազդեցութիւն ունի կլիմայի վրայ, որով պէտք է կլիմայն երեք բաժնել, դաշտային, լեռնային, և դառ ՚ի վայր:

Լնդհանրապէս դաշտային կլիման աւելի հաստատուն օդ ունի և աւելի բարեխառն է քան զլեռնայինը: Կլիմայ մը բարեբեր և լաւ ըսուելու համար գրեթե խաւոր պահանջելի յատկութիւններն են հողուն կազմութիւնն ու անոր մակերևութին վիճակը. և ինչպէս որ ամենուն յայտնի է՝ պինդ ու խոնաւ երկիր մը ոչ երբէք լաւ կրնայ ըլլալ. բաց ասկէ՝ փորձուած ալ է թէ նաև անտառները բոլորովին կտրելն ու վերցնելը

1 Գ. Դ. Diathermane.

շատ վնաս կը բերէ կլիմայի մը, որով հետև այսպէսով կլիման իր միջին բարեխառնութիւնը կը կորսնցնէ. և պատճառն այն է՝ որ ջրոց շոգիացմամբն ու անտառներու արտաշնչութեամբը մթնոլորտը յագելով՝ ամառուան սաստիկ ջերմութիւնը կը բարեխառնի, և ընդհակառակն նաև ձմեռուան ցրտին սաստկութիւնն ալ կը կոտորի, որովհետև անտառները արգելք մը ըլլալով սաստիկ քամիներու փչմանը՝ երկրին բնական ջերմութիւնը կը պահպանեն. ուստի անտառները կտրելով՝ այս օգուտները կը նուազին, որով և երկիրը մեծապէս կը վնասուի:

Վանապէս ծովերու մերձակայութիւնը շատ կ'օգնէ կլիմայի մը անփոփոխ ըլլալուն. վան զի ծովէն միակերպ ելած գոլորշին, որուն բարեխառնութիւնը գրեթէ անփոփոխ է, օգը գիջային կ'ընէ, որով և իր ջերմութիւնը հաւասարակչիւ կ'ըլլայ անոր ջերմութեան հետ: Բայց ընդհակառակն ընդհանրապէս ծովահայեաց երկիրները աւելի ստէպ են թակայ են՝ ինչպէս հեզիկ և կանոնաւորեալ քամիներու, նոյնպէս ալ սաստիկ փոթորիկներու:

Շատ մը տեսակ ծառեր դաշտային կլիմաներու տակն ալ հաւասարապէս առաջ կու գան և կ'աճին, ինչպէս կաղնին, կաղամախը, կնձնին, հային, թեղօշը, շօճը, սօսը, և այլն, որոնք շահաբեր կերպով կը մշակուին:

Լեռնային կլիման, որ բոլորովին տարբեր է բարեխառն և կամ խոնաւ կլիմաներէ, մեծապէս կը զանազանի դարձեալ՝ ձորային, զառ ՚ի վայր, և սարահարթ բլրոց կլիմաներէ:

Իսկ ձորերու մէջ արեւուն ճառագայթներէն եկած ջերմութիւնը հոն ժողվուելով, շրջակայ լեռանց կողերուն վրայ կ'անդրադառնայ, և տաքութիւնը խիստ սաստիկ կ'ըլլայ մթնոլորտին խաղաղ ըլլալուն պատճառաւ: Վարձեալ ջրոյ հեղեղները որ միշտ ձորերու մէջ կը զեղուն, պատճառ կ'ըլլան սաստիկ խոնաւութեան և ստէպ մառախուղի, որովհետև մթնոլորտը գոլորշիով յա-

գեալ ըլլալով, այս երևոյթներս ալ հոն տեղերը ստէպ կը պատահին . այս խոնաւութիւնն ու մառախուղը շատ փնասակար են տնկոց , վասն զի կը զրկեն զանոնք լոյսէն՝ որ անհրաժեշտ հարկաւոր է անոնց :

Բայ ասկէ , ուրիշ մետէորական երևոյթներն , ինչպէս գիշերային տամկութիւնը , գարնանային եղեամն , և այն , ձորերու մէջ ստէպ կը պատահին . ասոնք ալ շատ փնաս կու տան փափուկ և մասնաւորապէս պողատու ծառերու՝ որոնց գարնանային նոր ծլած բողբոջները եղեամին չեն դիմանար : Բայց ընդ հակառակն անտառային ծառերը , որոնք խիստ դիմացկուն են , աղէկ կը յաջողին ձորերու մէջ . օրինակի համար , հացածառը հոն գերազանց կերպով կ'աճի : Բայ ալ դիտելու բան է՝ որ ընդհանրապէս ձորերու մէջ առաջ եկած ծառերը կանոնաւորեալ և գեղեցիկ ձևով կ'ուռճանան . այս բանիս գրեթաւոր պատճառն այն է՝ որ ձորերը սովորաբար պահպանուած ըլլալով սաստիկ քամիներէ և ուրիշ ասոնց նման օդոյ փնասակար փոփոխութիւններէ , առանց արգելքի ազատ կերպով կը մեծնան :

Սարահարթ բլուրներն՝ որչափ որ ծովուն երեսէն բարձր ըլլան , կլիմանին ալ անոր համեմատ ցրտային կ'ըլլայ : Բսկէ զատ երբեմն ամպերուն լերանց գագաթները պատելն ու անկէ պատճառած մթնոլորտի խոնաւութիւնը և երբեմն ալ դարձեալ յանկարծական քամիով մը օդոյ պարզուիլը , և ասոնց հետ մետէորական երևոյթները միանալով , ինչպէս օրինակի համար ցօղն ու եղեամբ՝ որ ստէպ կը պատահին այս տեսակ կլիմաներու տակ , շատ փնասակար են տնկոց աճմանը :

Իսկ զառ ՚ի վայր տեղեաց կլիման՝ ձորային և լեռնային կլիմաներու միջին բարեխառնութիւնն ունի , և թէ որ աս տեսակ դիրքերը աւելի մօտ ըլլան ձորին քան թէ լերան գագաթին՝ գրեթէ ընդհանրապէս ձորային կլիմայի ազդեցութեան տակ կ'իյնան , միայն այս տար-

բերութեամբ՝ որ նոյն հովտային կլիմային սաստկութիւնը չունենար : () առ ՚ի վայրից մէջտեղերուն դիրքերը՝ միմիայն յարմար են բուսական աճման , թէպէտ և ջերմութիւնին աւելի նրւազ է՝ ինչ որ է հովտաց խորերը : Բայ բանիս գրեթաւոր պատճառներէն մէկն այն է՝ որ արևուն ջերմութիւնը անարգել ու անմիջապէս ուղղակի կը զարնէ , որով և տունկերը անխափան կ'ուռճանան : Վարձեալ հոս քան ուրիշ ամէն կլիմաներէ աւելի ծառերը աղէկ կերպով առաջ կու գան , և թէպէտ շատ չեն բարձրանար , բայց փայտերնուն տեսակը ընտիր կ'ըլլայ , այնպէս որ թէ վառելու և թէ ձեռակերտի յարմար է :

Գ . Վրից ընտրութիւնը մեծ ազդեցութիւն ունի տեղական կլիմայից վըրայ . վասն զի այս ալ մեծապէս կ'օգնէ տնկոց կանուխ և կամ աղէկ աճմանը . ինչպէս օրինակի համար դէպ ՚ի հիւսիս նայելու որ ըլլայ , բոյսերը խիստ ետև կը մնան , վասն զի արևուն ճառագայթները ուղղակի չեն զարնէր , այլ անդրադարձութեամբ կու գան , որով և իրենց տաքութեան զօրութիւնն ալ զգալի կը տկարանայ . բաց ասկէ , նաև հիւսիսային քամին , թէպէտ թեթև ալ ըլլայ , միշտ կը փնասէ տնկոց՝ աւելի ցուրտ ընելուն պատճառաւ : Բայց ուրիշ կողմանէ խիստ օգտակար է այս յապաղումը պինդ փայտ ունեցող ծառերու համար , որովհետև անոնց բողբոջները ուշ ծլելով՝ ազատ կ'ըլլան գարնանային փնասակար եղեամէն : Բայ դիրքի վըրայ ամէն տեսակ անտառային ծառ կըրնայ տնկուիլ , ու աղէկ առաջ կու գան , և մասնաւորապէս շագանակը : Սովորաբար այն ծառերն՝ որ հիւսիսային կողմը տնկուած են՝ քիչ ժամանակի մէջ զգալի կերպով կը մեծնան և վայելուչ տեսք մը կ'առնեն :

Կլիմանապէս արևելք նայող կլիման ալ քիչ շատ նոյն ազդեցութիւնը կ'ընէ տնկոց վըրայ՝ ինչ որ դէպ ՚ի հիւսիս նայող կլիմային վըրայ ըսինք . միայն այս տարբերութեամբ՝ որ արևելեան կողմը աւելի տաք է քան զհիւսիսայինը , և

օրն ալ աւելի չոր . և այս դիրքիս կլիման ալ յարմար է ծառատունկի , և փայտին տեսակը բաւական աղէկ :

Իսկ արեւմտեան կողմի կլիման սովորաբար շատ տաք կ'ըլլայ , և մասնաւորապէս կէսօրուընէ վերջն որ արեւուն ճառագայթները ուղղակի կը զարնեն . և թէպէտ ստէպ ստէպ գոլորշիով յագեալ քամիները նոյն տաքութե սաստկութիւնը կը կոտորեն , բայց միւս կողմանէ ալ այս քամիներս շատ կը դժուարացընեն ծառերու մշակութիւնը . որովհետեւ ստէպ և սաստիկ փոթորիկներու պատճառաւ արմատաքի ըլլալէ և ջախջախելու վտանգէն խայրսած ծառերն ալ խիստ տկար և ողորմելի կ'ըլլան , ու փայտերնուն տեսակը անպիտան և սաստիկ պինդ , անոր համար շատ տեսակ արուեստից մէջ չգործածուիր , և սովորաբար վառելու կու գայ :

Հարաւային կլիման ալ շատ նմանութիւն և յարաբերութիւն ունի արեւմտեան կլիմային հետ . բայց հարաւայինը աւելի փնասակար է տնկոց համար քան զարեւմտեանը . վասն զի ստէպ փրջած հարաւային քամիները , որոնք տաք և չոր կ'ըլլան , ամառնային արեւակէզ տաքութիւնը չբարեխառնելէն զատ՝ ջերմութիւնը և ևս կը սաստկացընեն : Եւս դրքիս վրայ տնկուած ծառերը շատ ենթակայ են գարնանային փրջասակար եղեամիներուն . այս պատճառաւ խիստ ուշ և դանդաղ կ'աճին , և շատ ալ չեն մեծնար :

Դ . Պաշտպանութիւններն ալ մեծ ազդեցութիւն կ'ընեն տեղական կլիմային վրայ . և կրնան երկու դաս բաժնուիլ . բնական պաշտպանութիւններ , ինչպէս լեռներն ու անտառները , և պաշտպանութիւնք ձեռակերտք մարդոյ , ինչպէս պատերը , խիտ առ խիտ շէնքերը , և այլն : Եւս երկու տեսակներն ալ հաւասարապէս կը պաշտպանեն եղեամէ , և քամիներէն՝ որոնք մահաբեր են ծառոց :

ՕՒԵՐԵԻՈՒԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Օդաքարերու վրայ Յռնաց կարծիքը :

() Օդաքարերու տեսարանը , մասնաւորապէս յայտնուող Պոտամոս ինկած շան թաքարը , զրգոեց Յունաստանի իմաստունքը քննելու այս խորհրդական երևոյթներուն ծագումը : Վիչ ժամանակի մէջ չորս զանազան կարծիքներ դուրս ելան , զորոնք մի առ մի կ'ուզենք հոս դնել :

Ա . Ըստ առաջին կարծեաց օդաքարերն արգասիք են երկրի արտաշնչութեանցի որ կը խորանան միւրաբար մէջին գաւառներուն մէջ : Հարկ չէ այս ծիծաղական կարծեաց անտեղութիւնը ցուցընել , որով մետէորական քարերը կը ձևանան այն թեթեւ գոլորշիոյն որ արեւը դէպի վեր կը քաշէ :

Բ . Երկրորդ կարծիքը կը համարի օդաքարերը քարեր ու ապարածի բեկորներ , զորոնք երկրէն կը քրջընեն ուժգին քոկորիներն ու հեռաները կը նետեն : Ըրիստոտեղ առաջինն եղած է այս կերպով բացատրելու մետէորական քարերուն երևոյթը իր Օրերն-ութանութեան մէջ , Վիլք Ա , գլ . 4 և 9 : Ինքն յինքեան ճշմարտանման կը թուի այս կարծիքը . բայց աղէկ մտածելով՝ դժուարին է ըմբռնել թէ փոթորիկ մը՝ որչափ ալ բուռն ըլլայ՝ կարենայ երկրէս փրցընել շանթաքարերու չափ մեծ զանգուածներ և այնչափ հեռու տեղուանք նետէ և այնպիսի արագութեամբ՝ որ հրաշէկ դառնան անոնք :

Երբեմն եղած կ'ըլլան դիպուածներ որ զայրագին քամիներ մեծկակ քարեր փրցընելով ասդիս անդին նետեր են . հաւանականապէս մարդիկ գտնուած են որ դիտեր են այս երևոյթը , և բնականաբար շփոթեր են զայն օդաքարերու հետ . և որովհետեւ օդաքարերը միշտ յանկարծական կ'երևան , ու դժուարին կրնայ հանդիպիլ որ անոնց իյնալուն պարագաները կարենայ մէկը դիտել , զարմանք չէ որ հիններն զգա-